Վերջերս անդրադարձած էինք այն իրողութեան, թէ իրեքայաջորդ կերպով Թուրքիոյ եւ Պարսի մէջ տեղի ունեցան թրքալեզու երկիրներու վեհաժողովներ: Ստորեւ տրուած յօդուածը կ'անդրադառնայ համաթրքական երագի իրականացման ձգտող վերոյիշեալ վեհաժողովներուն, ինչպէս նաեւ վերլուծումներ կը կատարէ Միջին Ասիոյ թրքալեզու պետութիւններէն իւրաքանչիւրին հարցերուն մասին:

Ապրիլի 8-10ը Պարսում տեղի ունեցաւ թուրքալեզու երկրների ճող վեհաժողովը, որի օրակարգում, ըստ պաշտօնական տեղեկատուութիւնների, ընդգրկուած էր տնտեսական համագործակցութեան հեռանկարների եւ ուժանիւթի վերաբերելի հարցերը: Թուրքիայի նախագահ Սիւլէյման Տեմիրլը, անդրադառնալով մնացած հանդիպումների դրապատճառներին, ընդգծել է, որ դրանց գլխաւոր նպատակն աշխարհագրական այն տարածքում, որտեղ գտնուում են թուրքալեզու երկրները, կայունութեան հաստատումը եւ բարեկամական ու համագործակցութեան մթնոլորտի ստեղծումն է:

Իրականում մնացած հարցերի նախածեղծող Անգարան խորհրդային Միութեան փլուզումից ի վեր համաթուրքական նկրտումներով ջանք չի ինչայում թուրքալեզու երկրների ու տարբեր երկրներում առկա թուրքական ծառուն ունեցող փոքրամասնութիւնների շրջանում ընդհանուր թուրքական ինքնութեան գիտակցութեան առաջացման ու զարգացման ուղղութեամբ: Հինգ այդ նպատակներն էր ծառայում նաեւ շուրջ 1 ամիս առաջ Թուրքիայում կայացած այդօրինակ մի այլ հաւաք թուրքական ազգերի բարեկամութեան, եղբայրութեան եւ համագործակցութեան համազումարը, որի աշխատանքներին մասնակցում էր 30 երկրներից աւելի այն հազար ներկայացուցիչ:

Խորհրդային Միութեան փլուզումը երեսն եկան Միջին Ասիայում մահնետական 5 եւ Անդրկովկասում 1 երկիր, որոնց համար որպէս պետականութեան ձեւ կարող էին ծառայել:

Իրանի իսլամական վարչակարգը, որի հաստատումը 70 տարի անաստուծութեան քարոզումից յետոյ գրեթէ անհաւանական էր, եւ այդ առնչութեամբ հետաքրքրալիք էր դերստուումն նաեւ Թեհրանը, բ) Թուրքիայի աշխարհիկ վարչակարգը, որի հաստատումը խիտ շահագրգիռ էր Արեւմուտքը, մասնաւորապէս Միացեալ Նահանգները, սակայն այդ երկրները գերադասեցին պահպանել նախկին համայնավարական վարչակարգը ժողովրդավարական հանդերձանքով:

Թէեւ Ռուսաստանի ազդեցութիւնը Միջին Ասիայում ակնյայտ էր, բայց արդիւնաւոր Թուրքիան Միացեալ Նահանգների հովանաւորութեամբ իր ազդեցութիւնը տարածելու ուղղութեամբ աշխուժ գործունեութիւնն ծաւալեց: Թուրքիային յաջողուել է տնտեսական եւ ռազմական ոլորտներում բազմաթիւ պայմանագրեր կնքել այդ երկրների հետ եւ այստեղ հիմնադրել տնտեսական բազմաթիւ կազմակերպութիւններ ու կառոյցներ, որոնք գլխաւորապէս ծառայում են Թուրքիայի ազդեցութեանը եւ համաթուրքականութեան արդեւծմանը: Աւելին. Անգարան տնտեսական ու քաղաքական

այդօրինակ գործունեութեանը զուգահեռ. առաւել աշխուժութեամբ գործում է մշակոյթի ասպարեզում, ինչը համաթուրքականութեան գաղափարախօսութեան տարածման լաւագոյն միջոց է:

Վերջին ջանքեր է գործադրում միասնական լատինական գրութեան համակարգ ստեղծելու ուղղութեամբ. արդէն գործում է թերեւս հանրընդհանուր հեռուստաժրագիր. ձեւաւորում են փուլում է գիտութիւնների եւ մշակոյթի միասնական ակադեմիան:

Դեռեւ 1993ին աւելի քան 10 հազար միջնասիայի աշակերտներ էին սովորում Թուրքիայի միջնակարգ դպրոցներում, հազարաւոր ուսանողներ համալսարաններում, գիճուորական հիմնարկներում ու կրօնական հաստատութիւններում: Նրանց, որոնց զգալի մասը հայերեցիք է վերադառնում համաթուրքականութեան գաղափարների տողում: Բացի այդ, թուրք բազմաթիւ խորհրդակցութեան աշխատանք թուրքալեզու երկրների բանակներում, իսկ Արդալիճանի բանակը կառուցուածքով, համազգեստով ու տարբերանշանով լիովին համապատասխանում է Թուրքիայի բանակին:

Անդրադառնալով համաթուրքականութեան նկատմամբ մեծ տրուութիւնների քաղաքականութեանը կարելի է Եշել, որ, փաստօրէն 20րդ դարի թէ սկզբին եւ թէ վերջին ճրանք ձգուել են համաթուրքականութեանը ծառայելու իրենց նպատակներին: Եթէ դարասկզբին Մեծն Բրիտանիան, կերտուրելով այն, ցանկանում էր արգելալէ Ռուսական Կայսրութեան առաջնադասումը Միջին Ասիան եւ արագացնել նրա փլուզումը, ապա այսօր Միացեալ Նահանգներն այն «կիրառում» են ընդդէմ տուեալ շրջանում Ռուսաստանի ազդեցութեան, ինչպէս նաեւ ի նպաստ վերջինիս փլուզման: Միւս կողմից, թէեւ 20րդ դարի սկզբին Անգարան լուրջ յաջողութիւններ չարձանագրեց միասնականութեանը զոհ դարձաւ, ինչը թուրքական առաւելապէս տուժի Հայաստանը: Նշենք, որ այսօր էլ բազմաթիւ առարկայական պատճառներով Անգարային հազիւ թէ յաջողուի լուրջ ձեռքբերումներ արձանագրել թուրքական առանցք ստեղծելու հարցում, ինչը թուրքական ազդեցութեանը ու թուրք պաշտօնատարները պատճառաբանում են տարածքային միասնականութեան բացակայութեանը մասնաւորապէս, որ դրան խանգարում են Հայաստանն ու Իրանը: Մինչդեռ համաթուրքականութեան գաղափարի իրականացման ոլորտում Թուրքիայի ջանքերի ապարդիւն լինելը թերեւս պէտք է պայմանաւորել նախ այն բանով, որ ինչպէս նախորդ դէպքում, այժմ էլ մեծ տրուութիւններ թերեւս շահագրգիռ չեն թուրքական առանցքի ստեղծմանը: Բացի այդ, թուրքալեզու երկրների Թուրքիայի, խորհրդաստանի, Ազգաբնակչութեան, Դազախստանի, Թուրքմենստանի եւ Ազգրպիճանի միջեւ տարբեր ոլորտներում առկա են տարածայնութիւններ եւ շահերի հակասութիւններ: Նախ միջինասիական երկրների բնակչութիւնը միատարր չէ, Դազախստան

այն հետապնդող չի լինում: Ճիշդ է, այս հանգրուանում յաջողութիւն չարձանագրուեց, բայց հարցը փակուած չէ:

Բայց, նախ, մի հակիրճ պարզարանում: Ֆրանսայի Ազգային ժողովը քուէարկել եւ արդէն ճանաչել է Հայոց Յեղասպանութիւնը: Խօսքն այն մասին էր, որ Մերակոյտը ընթացք տայ եւ օրէնքի ուժ հաղորդի այդ խնդրին: Այսինքն այդուհետ Հայոց Յեղասպանութիւնը հերքելը օրէնքը խախտել կը նշանակէ:

Կայ «Ապրիլի 24ին» յանձնախումբ, ուր համաթուրքական են ֆրանսահայ գաղութի բոլոր ուժերը, ներառեալ՝ Հայ Դատի յանձնախումբը, եւ այն միասնաբար հետապնդում է այս հարցը:

Հ.- Իսկ ներկայումս ի՞նչ այլ կայլեր են կատարում կամ նախատեսում Հայ Դատի յանձնախումբի կողմից, եւ ինչու, որ Հայոց Յեղասպանութեան 85րդ տարելիցն է:

Պ.- Հայ Դատի յանձնախումբը այդ առիթով մի շարք քաղաքներում համաժողովներ կ'անցկացնեն: Բայց հիմնականում շեշտը դրուել է տարրեր երկրների խորհրդարանների կողմից պատմական փաստը ճանաչելու ուղղութեամբ տարուող աշխատանքների վրայ: Աւելի ճիշդ, այդ աշխատանքները նոր չէ, որ տարուած են, պարզապէս այժմ նաեւ 85րդ տարելիցի փաստն էլ է օգտագործուած:

Բայց արդէն այդ աշխատանքներում է, որ գգային է Հայաստանի Ազգային ժողովի բացակայութիւնը: Այսինքն, երբ Հայաստանի Ազգային ժողովը միջխորհրդարանական յարաբերութիւններում իրագրութիւն երկրների հետ, Յեղասպանութեան ճանաչման հարց բարձրացնում է այդ յարաբերութիւնների ժամանակ: Ինչո՞ւ չի բարձրացնում: Կամ, օրինակ, ինչու է նոյն Հայոց Յեղասպանութեան 85րդ տարին լրանալու առիթով Ազգային ժողովը դիմում-ուղեր չի յղել աշխարհի երկրների խորհրդարաններին:

Միւս կողմից, ընդհանրապէս Հայկական միջպայտում նոր դարի նախաշեմին Յեղասպանութեան ճանաչման, Հայ Դատի հետապնդման աշխատանքների յստակ ծրագիր ձեւաւորելու խնդիր կայ:

«ԱՅՈՑ ԱՅԽԱՐԸ»

ԼՄՄԱ ԲԵԳԻՉԱՆԵԱՆ

«Նորարբեր»

ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈՒԹՆԵՐ

ՓՈՐԹՈՒԳԱԼՅԻՆԵՐՈՒ ԿՈՂՄԷՆ ԸՆԿՆԱԿԱՆ ՈՍՍԱՑԻՆ ՈՒՂԻՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՈՎ

ՀԱՅ - ՓՈՐԹՈՒԳԱԼԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՕՏԱՐ ԱՓԵՐՈՒ ՎՐԱՅ



Լիզպոնի հարաւային Սեսիմպրա աւազը ձկնորսական (սարտիմ) ճարտարարուեստի կերտում:

Հայկական գաղթածայինները շարքին բաւական իրաւատու կեցած է Փորթուգալի գաղութի եւ ընդհանուր առմամբ հայ- փորթուգալական յարաբերութիւններու պարագան, այն իմաստով, որ երկու ժողովուրդները իրարու հետ կապ եւ յարաբերութիւն ունեցած են առաւելաբար օտար հողերու վրայ, եւ հետեւաբար այլ այլ յարաբերութիւնները զարգացած են բաւական հետաքրքրական պայմաններու տակ:

Հայերն ու փորթուգալացիք միջազգային առեւտուրին մէջ կարեւոր դերակատարութիւն ունեին. հայերը ցամաքային, իսկ փորթուգալացիք ծովային ուղիներուն վրայ: Հայ առեւտրականներուն ձեռքն էր յատկապէս Յնդկաստանի եւ յարակից երկիրներուն հետ առեւտուրը, որ հին ցամաքային ուղիներով, կարաւաններով կը կատարուէր. իսկ փորթուգալացի նավարներն ու առեւտրականներն ուղիկանոսներուն ու ծովերուն վրայ մենաշնորհի հաստատած էին. յատկապէս ժե. - ժ. դարերուն Յնդկաստանի, Մալայեան թերակղզիի, եւ Յնդկացի ու Ինդոնեզիական ուղիկանոսներուն կղզիներու եւ Եւրոպայի միջեւ ծովային առեւտուրը անոնց ձեռքն էր: Անոնք Յնդկաստանի հարաւ - արեւմտեան ափերը եւ յատկապէս Կոան, ինչպէս նաեւ Մալայեան թերակղզիի Մալաքքա քաղաքը ծովային առեւտուրի խարխիսի վերածեցին: Այս շրջաններուն մէջ հայ առեւտրականներ լայն գործառնութիւններ ունեին, եւ ժամանակի ընթացքին կարեւոր քիւլուր հայերը զացին հաստատուեցան Յնդկաստանի տարբեր քաղաքներու, Մալաքքայի եւ յարակից կղզիներու մէջ եւ սերտ յարաբերութիւն հաստատուեցին փորթուգալացիներուն հետ:

ՀԱՅ - ՓՈՐԹՈՒԳԱԿԱՆ ՀԻՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հայ - փորթուգալական հին յարաբերութիւններու մասին հաւաստի տուեալներ չկան. հազարէպօտն միայն Հայաստան այցելող փորթուգալացիներու մասին յիշատակութիւններ կան: Հայեր փորթուգալացիներուն հետ առաջին անգամ կապ եւ յարաբերութիւն հաստատեցին խաչակրական արշաւանքներուն ժամանակ: Արդարեւ, Կիլիկիա հասնող եւ անկէ անցնող խաչակիրներուն մէջ կային նաեւ բաւական մեծ քիւլուր փորթուգալացիներ, որոնք ընդունելութիւն եւ աջակցութիւն ստացան հայերէն:

Հաւանաբար այս ժամանակներէն սկսեալ Կիլիկիոյ հետ առեւտրական յարաբերութիւն ունեցող եւրոպական նաւերուն մէջ կային նաեւ փորթուգալական նաւեր. արդարեւ, փորթուգալացիք այս ժամանակ արդէն յարաբերութիւն հաստատած էին միջերկրականեան տարբեր երկիրներու ու ժողովուրդներու հետ:

ԺԲ. դարուն գրուած հայկական մատենանի մը մէջ յիշատակութիւն կայ չքնաղ հայուկիի մը մասին, որուն ձեռքը խընդրելու եկած են Մոսկուայի եւ Փորթուգալի թագաւորներուն զաւակները:

Հոռմի Ինոքովկեմտիոս Գ. պապը (1243-1254) կաթոլիկ դաւանանքը Արեւելքի մէջ տարածելու համար ութ քարոզիչներ ուղարկեց Վրաստան եւ մոնկոլական տիրապետութեան տակ գտնուող երկիրներ. որոնցմէ մէկն էր Հայաստան: Հայոց մէջ դրկուած առաքելութեան պետն էր եղբայր Լորէնց Փորթուգալցի. հաւանական է նաեւ, որ միւս հոգեւորականներուն մէջ ալ եղած ըլլան փորթուգալացիներ:

Այնուհետեւ, ժԳ. դարէն սկսեալ Ֆրանչիսքան, Տոմիսիքան եւ Օկիւսիքան կաթոլիկ միաբանութիւնները առաքելական լայն գործունէութիւն ծաւալեցին հայոց մէջ. վանքեր, եկեղեցիներ եւ կեդրոններ հիմնեցին, եւ հայ եկեղեցիներ բաժնուած, ունիթոններ (միաբար) խընքակներ կազմեցին: Այս միաբանութիւններուն մէջ բազմաթիւ փորթուգալացիներ կային, որոնք գործեցին հայոց մէջ: Անոնցմէ յիշենք Օկիւսիքան միաբանութեան Կուլիլմոս վարդապետ, որ ժԷ. դարուն սկիզբը, առաքելական գործունէութեան կողքին, իրեն միաբանակից այլ հոգեւորականներու հետ հայկական վանքերը այցելեց եւ կաշառքով, գողութեամբ եւ այլեւայլ միջոցներով աշխատեցաւ հաւաքել հայ եկեղեցւոյ համար նուիրական նշխարներ, այն հիմնաւորումով, որ այդ նշխարները անշուք եւ լքուած վայրերու մէջ կը գտնուին եւ պետք էր զանոնք փրկել ու պահպանել:


Կուլիլմոս վարդապետ, երկարատեւ քարոզութիւններ եւ շրջապարթիւններ տես, իր ընկերոց հետ միասին սպանուեցաւ աւազակներու կողմէ, 1611ին, Գեղարքունի գիւղին մօտ:

ՎԱՍՔՕ ՏԱ ԿԱՄԱԿՆԻ ԿՈՂՄԷՆ ՈՎԿԻԱՆ ՈՍՍԱՑԻՆ ԵՆՐ ՈՒՂԻՆԵՐՈՒ ՅԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՈՎ ՎԿԻԱՆ ԶԱՅՏՆԱԲԵՐՈՒՄՈՎ

Փորթուգալացիք, որոնք դարեր շարունակ մաւրերու յարձակումներուն ու տիրապետութեան ենթարկուած են որոշ ժամանակ ալ սպանակաւ Լեոնի թագաւորութեան կազմին մէջ մտած էին, ժԲ. դարուն զօրացան եւ Ալֆոնսօ Գեոնիք 1139ին ինքզինք Փորթուգալի թագաւոր հռչակեց: Այս ժամանակաշրջանէն սկսեալ յատկապէս, փորթուգալացիք, իբրեւ ծովագետներ երկրի բնակիչներ, իրենց բարօրութիւնը մեծ մասամբ ծովերուն կապեցին. անոնք ձկնորսական ու առեւտր-

րական խուզարկութիւններ կը կատարէին հեռաւոր ուղիկանոսներու ու ծովերու վրայ հասնելով օտար ու անծանօթ երկիրներ, կղզիներ ու ցամաքամասեր: 1383ին Փորթուգալի իշխանութեան տիրացաւ Ալիզ ընտանիքը յանձնի ժուան Ա.ի, որմէ ետք, Փորթուգալ Քասիլիոյ դէմ յարձակման պատերազմէ ետք յաջողեցաւ շրջանային կարեւոր ուժ դառնալ:

Ժուան Ա.ի երրորդ զաւակը Գեոնի Ծովագնաց ծովային մեծ արշաւանքներ կազմակերպեց, երկրախոյզներ ուղեկցեց ուղիկանոսներուն խորերը եւ նոր ուղիներ յայտնաբերեց, որուն, շնորհիւ Փորթուգալ ղեպի հեռաւոր ծովեր ու ուղիկանոսներ տարածուեցաւ: Փորթուգալացիք 1419ին յայտնա-



Փորթուգալցի ծովախոյզներու յիշատակին կանգնած կորթոյ Լիզպոնի մէջ:

բերեցին Փորթո Սանթո. 1420ին Սատլոյր, 1432ին Ազորեան, իսկ 1456ին Քափ Վեր կղզիները, եւ յեանկետեր ստեղծեցին Ափրիկէի արեւմտեան ծովափերուն:

Ենամուել Ա. 1495ին տիրացաւ Փորթուգալի գաւիհն, որմէ ետք ան չորս նաւեր յատարասել տուաւ, անոնցմով նոր աշխարհներ յայտնաբերելու նպատակով, եւ անոնց հրամանատարութիւնը Վասքօ տա Կամայի յանձնեց:

Վասքօ տա Կամա, զաւակը Էսթրեան տա Կամայի, ծնած 1460ին, Սինտ, ազնուական հին ընտանիքի մը պետն էր. Կամայեքը հարաւարեւմտեան Փորթուգալի Սինտ ամրոցին տէրն էին եւ մեծ հեղինակութիւն ունեին երկրին մէջ:

Վասքօ տա Կամա Գեոնի Ծովագնացի օրով Յնդկաստանի ծովային ճամբան բացած էր Փորթուգալի առջեւ, իսկ ժուան Բ.ի օրով, 1492ին, հարաւային Փորթուգալի մէջ ֆրանսական նաւերու կողմէ փորթուգալական նաւերու դէմ կատարուող յարձակումներուն դիմադրած եւ ֆրանսացիները դուրս քշած էր այդ կողմերէն:

Վասքօ տա Կամայի արշաւախումբը կազմող չորս նաւերը «Սան Կապրիէլ», «Սան Ռաֆայէլ», «Պերրիօ» եւ 200 թոն կշռող մթերքներու յատուկ նաւ մը, 8 Յուլիս 1497ին Լիզպոնէն ճամբայ ելան ղեպի հեռաւոր ու անծանօթ ուղիկանոսներ. Քափ Վեր կղզիներն արշաւախումբին միացաւ փորթուգալցի ուրիշ ծովագնաց մը Պարթոլմիո Տիագ, որ քանի մը տարի առաջ հետախուզած էր Բարեյոսույ հրուանդանը եւ այդ օրերուն կ'ուղղուէր Արեւմտեան Ափրիկէ, Ոսկեայ Ափունքի (Ներկայ Ղանա) Սան Ժորկէ տա Սինա ամրոցը:

Կայ Հարաւային Ափրիկէի հարաւարեւմուտքը):

Արշաւախումբը 25 Ղեկտեմբերին հասաւ Նաթալի ծովափը, ուրկէ 11 Յունուար 1498ին շարունակեց իր ճանապարհը եւ 25 Յունուարին հասաւ Մոզամպիքի ափերը, ուր Վասքօ տա Կամա կապեր հաստատեց տեղացիներուն հետ:

Մոզամպիքէն արշաւախումբը Ապրիլին ուղղուեցաւ ղեպի Մոմպասա (Ներկայ Քենիոյ մէջ), ուրկէ, 23 օրու ճամբորդութենէ ետք Յնդկաց ուղիկանոսը կտրելով 20 Մայիսին Յընդկաստանի հարաւարեւմտեան ափերը Քալիքոն բնակեցաւ, ուր եւս Վասքօ տա Կամա տեղացիներուն հետ առեւտրական կապեր հաստատեց:

Օգոստոսին արշաւախումբը Քալիքոնէն ճամբայ ելաւ ղեպի Կոայի մօտակայ Անժիտի կղզին. ապա Մանտիլի, ուր «Սան Ռաֆայէլ» նաւը այրեցաւ:

Մանտիլիէն արշաւախումբը ճամբայ ելաւ 8 Յունուար 1499ին, բայց փորթուգալները հակառակ ուղղութեամբ էին. առաջատուները գործի չէին ծառայել, եւ կատաղի այնկծութիւններուն դէմ նաւաւարները երեք ամիս անըող թիակարեցին, շատեր մահացան մնուողի պակասէն, մինչեւ որ Յնդկաց ուղիկանոսը եւ Արաբական ծով կտրեցին: Մարտ 20ին «Սան Կապրիէլ» եւ «Պերրիօ» նաւերը դարձան ղեպի Բարեյոսույ հրուանդան, բայց մահի մը ետք փորթուգալ պատճառով զիրար կորսնցուցին: «Պերրիօ» Յուլիս 10ին հասաւ Փորթուգալ եւ Թակոսագետի ափին ցամաք ելաւ: Վասքօ տա Կամա, որ «Սան Կապրիէլ»ի մէջ կը գտնուէր, իր ճամբան շարունակեց ղեպի Ազորեան արշիպելագոսի Թերսուլյա կղզին եւ 9 Սեպտեմբերին Լիզպոն ցամաք ելաւ:

Իբրեւ վարձատրութիւն էնամուել թագաւոր տոմ տիրոջը եւ առատ նուէրներ տուաւ Վասքօ տա Կամայի:

Վասքօ տա Կամայի ձեռք ձգած այս մեծ յաջողութիւնը օգտագործելու համար էնամուել թագաւոր տասներեք նաւեր բաղկացած տորմիդ մը, Փետրը Ալվարէս Կապրալի հրամանատարութեան տակ ճամբայ հանեց ղեպի Յնդկաստան: Այս նաւախումբը, ուղիկանոսներուն վրայ իր ճամբորդութեան ժամանակ, 22 Ապրիլ 1500ին դիպածով յայտնաբերեց Պրազիլը. որ այնուհետեւ փորթուգալական գաղութի վերածուեցաւ:

Այս յաջողութենէն ետք էնամուել թագաւոր տասը նաւեր բաղկացած այլ տորմիդ մը պատրաստեց եւ անոր հրամանատարութիւնը սկիզբը Կապրալի, բայց յետոյ Վասքօ տա Կամայի յանձնեց: Նաւախումբը 1502ին ճամբայ ելաւ ղեպի Յնդկաստան, ճամբան ցամաք ելաւ Արեւելեան Ափրիկէի ափերը Մոզամպիք (որ յետոյ գաղութի վերածուեցաւ), Քիլուա (Ներկայ Թանզանիա) եւ հարաւային Արաբիա, եւ այնուհետեւ հասաւ Յնդկաստան եւ Կոայի ու ծովափնայ այլ շրջաններու մէջ փորթուգալական իշխանութիւն հաստատեց:

Վասքօ տա Կամա այնուհետեւ վերադարձաւ Փորթուգալ, ուր այս անգամ իբրեւ վարձատրութիւն 1519ին Վիտիկուէյրայի կոնս տիրոջը ստացաւ թագաւորին:

Հայ առեւտրականները, որոնք Հայաստանէն, Պարսկաստանէն եւ այլ երկիրներով ուղտերու ու գրաստներու կարաւաններով Յնդկաստանի ծովափնայ քաղաքներ եւ նաւահանգիստներ կը հասնէին հոն իրենց ապրանքները ծախելու համար, այս ժամանակ սկսան կապեր հաստատել փորթուգալացիներուն հետ: Փորթուգալացիք իրենց կարգին պետք ունեին հայերուն բերած ապրանքներուն, որովհետեւ իրենց ցամաքային ուղիներուն անծանօթ էին, եւ կարելիութիւն ալ չունէին ցամաքային առեւտուրի ձեռնարկելու եւ հեռաւոր շրջաններ թափանցելու:

Հայ առեւտրականները նաեւ Յնդկաստանի ներքին զաւառներուն մէջ առեւտուրը գրեթէ իրենց մենաշնորհին վերածած էին. անոնք հեռաւոր շրջաններէն համեմատելի այլ բազմատեսակ ապրանքներ կը հաւաքէին եւ զանոնք հնդկական նաւահանգիստներ կը տանէին ծախելու: Փորթուգալացիք մեծապէս հետաքրքրուեցան այդ համեմատելի իրենց համար անգտանելի ապրանքներով, եւ սերտորէն սկսան գործակցիլ հայ առեւտրականներուն հետ, որովհետեւ այդ ապրանքները Եւրոպա տանելով ու ծախելով անոնք մեծ եկամուտ կ'ապահովէին:

ՀՆԴԿԱՍՏԱՆԻ ԳԱՂՈՒԹԱՑՈՒՄԷՆ ԵՏՔ ՀԱՅ - ՓՈՐԹՈՒԳԱԿԱՆ ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՍԵՐՏ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Վասքօ տա Կամայի արշաւախումբերուն շնորհիւ, այսպէսով, Յնդկաստանի հարաւային ծովափնայ շրջաններուն մէջ փորթուգալական իշխանութիւն հաստատելէ ետք, էնամուել Ա. թագաւոր առաջին անգամ իբրեւ փոխարքայ 1505 Մարտին Յնդկաստան ղրկեց Ֆրանսիսքօ տը Ալմէյտան: Ան քսանմէկ նաւերով ճամբայ ելաւ, անցաւ Բարեյոսույ հրուանդանէն, Ափրիկէի ափնէն եւ արեւելեան Գալեպոս, ուր ամրոց կառուցեց, նուաճեց Մոմպասան եւ ճամբան շարունակելով ու Յնդկաց ուղիկանոսը կտրելով հասաւ հարաւային Յնդկաստան եւ Քոչինի մօտ ցամաք ելաւ: Ալմէյտա արշաւախումբը շուրջ փորթուգալացիներու մենաշնորհը ապահովելու համար առաջին հերթին իրարմէ որոշ հեռաւորութեամբ վայրերու մէջ ամրացուած կայաններ հաստատեց: Ան նաեւ Մալայեան թերակղզիին հարաւոր

գտնուող Մալաքքայի տեղական իշխանութիւններուն հետ առեւտրական համաձայնութիւններ կնքեց:

Ֆրանսիսքօ տը Ալմէյտայի առաջին գործերն մէկը եղաւ նաեւ իր զաւակը Լուրնցօ տը Ալմէյտան Մալաքքայէն կղզիներ ղրկել. անոնք բնակիչներուն հետ առեւտրական համաձայնութիւններ գոյացնելու համար Լուրնցօ տը Ալմէյտայ կղզիներուն վրայ փորթուգալական գերիշխանութիւն հաստատեց, եւ յոյն տարին ալ 1505ին Սէլյան (Ներկայ Սոի Լանքա) կղզին ցամաք ելաւ. նուաճեց անոր մէկ մասը եւ Քոլոմպոյի մէջ բնակավայր հաստատեց:

Լուրնցօ տը Ալմէյտա 1506ին կողի բռնուեցաւ արաբական նաւատորմի մը հետ, Յնդկաստանի արեւմտեան ծովափերուն. 1508ին ան այլ նաւատորմի մը հետ կողի բռնուեցաւ Մալաքքայի մօտակայքը. Չոլի մօտակայ ջուրերուն մէջ: Հոն ան ծուղակը ինկաւ եւ շրջապատուեցաւ եգիպտական նաւատորմի մը կողմէ: Ան քաջաբար կռուեցաւ, բայց ծանրորէն վիրաւորուեցաւ եւ հերոսաբար ինկաւ կողի մէջ:

Բայց այնուհետեւ անոր հայրը Ֆրանսիսքօ տը Ալմէյտա նուաճեց արաբ եւ եգիպտացի ծովափները եւ 1509 Փետրուարին հեռացուց գաւոնը Յնդկաստանի ափերէն:

Այս յաջոթանակէն ետք ծովային երթեւեկը յարաբերաբար աւելի ապահով դարձաւ եւ արաբ ծովահէններ այլեւս չհամարձակեցան մօտենալ փորթուգալական հակալքի տակ գտնուող ծովային ուղիներուն: Յիշենք, որ Արաբական թերակղզիին հարաւարեւմտեան ծովափերը եւ նաւահանգիստները (Ներկայ Օման) 1505ին փորթուգալական տիրապետութեան տակ ինկան:

Այս բոլորը պատճառ դարձան, որ այնուհետեւ բոլոր օտար նաւերը փորթուգալացիներուն հովանաւորութեան դիմէն եւ իրենց նաւերուն վրայ փորթուգալական դրոշ կրէին: Եղաւ ժամանակ մը, երբ բոլոր օտար նաւերը անպատճառ փորթուգալական դրոշ կը կրէին, ապահով երթեւեկելու համար:

Ուղիկանոսներուն վրայ փորթուգալական գերակայութեան հաստատումը մեծապէս նպաստեցին հայ առեւտրականներու գործունէութեան, որովհետեւ անոնք միջոցով հնդկական նաւահանգիստներ բերուած ապրանքներուն փորթուգալցի առեւտրականներու կողմէ Եւրոպա փոխադրութիւնը լայն ծաւալ ստացաւ: Փորթուգալացիք գիտէին, որ ծովային առեւտուրին մէջ իրենց աշխուժութիւնը կարեւոր մասամբ հայ առեւտրականներու ցամաքի ճամբորդ Յնդկաստանի նաւահանգիստները բերած իրենց ապրանքներն կախուս ունէր, եւ անոնք աշխատեցան ամէն գնով սիրաշահիլ գանձը:

Յիշենք, որ Փորթուգալ 1505ին գաղութի վերածած էր նաեւ Մոզամպիքը Արեւելեան Ափրիկէի մէջ, եւ սկսած էր գաղութացնել ու վերաբնակեցնել Պրազիլը. փորթուգալացիք մեծ ջանքեր կը թափէին նորայայտ եւ անծայրածիր այդ երկիրը շնորհուն համար: Այս բոլորին համար Յնդկաստանէն մինչեւ Ափրիկէ եւ Պրազիլի ափերը, ուղիկանոսներուն վրայ գերակշռութեան պահպանումը կենսական հարց էր:

Ֆրանսիսքօ տը Ալմէյտա, որ պատմական մեծ դեր ունեցած էր փորթուգալական կայսրութեան հաստատման մէջ, 1509ին, ուղիկանոսներուն վրայ ծովահէններու վտանգը վերջնականապէս չէզոքացնելէն ետք, այս անգամ ինք չէզոքացուեցաւ Աֆոնսօ տ'Ալկուադրի կողմէ. որ փոխարինեց զինք իբրեւ Յնդկաստանի փոխարքայ: Ալմէյտա այնուհետեւ հեռացաւ Յնդկաստանէն եւ գնաց Հարաւային Ափրիկէ. ուր 1 Մարտ 1510ին սպանուեցաւ բնիկներուն կողմէ:

Յիշենք, որ Յնդկաստանի եւ յարակից կղզիներու նաւանման մէջ մեծ դեր ունեցած տը Ալմէյտա ընտանիքը Պրազիլի փորթուգալացման մէջ եւս տիրական դերակատարութիւն ունեցաւ. մինչեւ հիմա ալ անոնք Փորթուգալի եւ Պրազիլի մեծ ազդեցիկ եւ ամէն շրջաններու մէջ տարած-



Ստրուկներու հաւաքման համար փորթուգալացիներու կառուցած բնակավայր Մոզամպիքի ծովափին:

ած ընտանիքներն են: Աֆոնսօ տ'Ալկուադրա աւելի ընդարձակեց Յնդկաստանի փորթուգալական գաղութները: Ան 1511ին գրաւեց Մալաքքան Մալայեան թերակղզիին մէջ (Ներկայ Մալեզիա), եւ զայն մեծ նաւահանգիստի ու բերդաքաղաքի վերածեց, որ մէ ետք անկախ հարաւարեւմտեան Ասիոյ առեւտրական ամէնէն մեծ կեդրոնը դարձաւ: Փորթուգալացիներու կողքին, հոն կարեւոր քիւլուր հայ առեւտրականներ հաստատուեցան. հայերը կարեւոր դերակատարութիւն ունեցան Մալաքքայի զարգացման ու բարգաւաճման մէջ եւ փորթուգալցի առեւտրականներուն զխաւոր աջակցները դարձան:

Այս ժամանակներէն սկսեալ հայեր սկսան հետաքրքրուիլ Փորթուգալով եւ հայկական փոքրիկ գաղութ մը կազմաւորուեցաւ Լիզպոնի մէջ:

ԱՐՇԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ԱՇԽԱՐՀԻ ՏԱՐԱԾՔԻՆ ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՆԵՐՈՒ ԱՌԵԻՏՈՒՐԸ ԲԱՐԳԱԻԱՃՈՒՄ Կ' ԱՊՐԻ

Աշխարհի տարածքին ճարտարաբանական մարդամեքենաներու ապագան քննարկող անգլո-ամերիկացի շտաբի ղեկավարը 20 առ հարյուրով աճ արձանագրած են:

Մինչև մարդամեքենաներու սակերը նուազած են, աշխատանքներու ամսականները աստիճանաբար աճ արձանագրած են: «Անցնող ամիս տարի մարդամեքենաները աւելի չափազանց կը դարձնէ», կ'ըսէ Յաննանտոնիոյ այս տարւան տեղեկագիրը:



Կործանելով լվլլրը երեք սկիւրներ, նկարչական սրբութեամբ մը, վիտամինային մը եւ համակարգիչ մը, կապուած՝ արբանեակներու սփանդակութեամբ առաջնորդող դրոյթներն են ու ռոտարի մը:

Մարդամեքենան կրնայ քչել՝ շնորհիւ համակարգիչին, որուն միջոցով կորնայ հեռաւարտութիւնները գնահատել եւ խոչընդոտել խուսափելով:

Անոր թեւերէն մէկը րանային կը դարձնէ, միւսը արագութիւնը կը փոխէ, իսկ երրորդը ինքնաշարժ կը վարէ, կ'ըսէ ընկերութեան մէկ րանբերը: Հակառակ անոր երրորդ թեւին, Քլաուս կը նմանի իսկական մարդու մը, բացի ատկէ, որ անոր թեւերէն մէկը գլուխէն կ'ելլէ:

Թէեւ Քլաուս տակաւին պատրաստ չէ հանրութեան գործածած մայրուղիներուն վրայ ինքնաշարժ վարելու, սակայն գործածած միջոցները կրնան օր մը օգտագործուիլ սփանդակելու համար վարորդներուն, որոնք կրնան ինքնաշարժ վարած չլինելով մէջ ինքնաշարժներու փորձարկումի վայրի մը մէջ:

Անկա կը նախատեսէ, որ մարդամեքենաներու պահանջը հետզհետէ աւելի ու աւելի պիտի բարձրանայ, յատկապէս աշխատանքի վտանգաւոր պայմաններու համար, ուր քիմիական նիւթեր, ներկ, ծուխ, իւղ, աղտոնեղակալութիւն են:

ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՆ ԸՆԿՐԱՆՈՒԹԻՒՆ

Մարդամեքենայ հիւանդապահներ կրնան մօտ ատենէն սփանդակել հիւանդներու եւ տարեցներու, անոնց ըսելով, թէ երբ պէտք է իրենց դեղահատերը առնեն եւ անոնց բաց կերակուր ու մարմնին ջերմաստիճանը արձանագրեն:

Փիցարոլի եւ Քարնրիկի Մեյլըն համալսարանի (Փենսիլվանիա) ճարտարագէտները մշակած են նոր տեսակի մարդամեքենաներ՝ տարեցներու եւ անկողնի մէջ քամուած հիւանդներու կենսաբանականներու եւ անոնց բժշկները ի մէջի մարմով տեղեկ պահելու համար՝ առողջական որբէլ հարցի մասին:

Միջ մարդամեքենան տակաւին նախատեսուած է եւ, ըստ գայն յղացած

գիտնականներուն, եզակի է, տարեցներու համար պատրաստուող սարքերուն միջեւ:

«Ասիակ տնտեսական օգնական մըն է եւ ո՛չ ինչպիսի տեսուոր արտ մը կամ խնայողի էակի օժտմանակ մը», կ'ըսէ մասնագէտներէն մէկը:

Ճարտարագէտները կ'աշխատեն նաեւ միջոցներ գտնել՝ առիթ տալու համար մարդամեքենաներու, որ շիշեր եւ տուփեր բանան՝ արբիւք տառապող հիւանդներու համար:

ԳԵՐՄԱՆԱՑԻ ԸՆԿՐԱՄ ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՆ

Երեք թեւ, երեք ոտք ունեցող եւ արտաբերուած է ինչպէս մարդամեքենան Մարտի վերջերուն:

ՄԱՐՏ ԱՄՍՈՒԱՆ ՆՈՒՒՐԱՏՈՒՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԹԻՉՆՈՅ ԲՈՅՆԻՆ

● Ազգային մը՝ ուխտի մը առիթով 150,000 լ.ու. տարբ. Յովիկ վարդապետան 100,000 լ.ու. ազգային մը 594,000 լ.ու. Գուրուսիան ընտանիք 50,000 լ.ու.:

● Սարգիս Խաչատուրեանի մահուան քառասունըփն առիթով՝ Սեւակ Խաչատուրեան 100 ֆ.ֆ., Սահակ Խաչատուրեան 40,000 լ.ու. տեք եւ տիկին Արտեմ Սարգիսեան 20S. տեք եւ տիկին Գեորգ Պոստոլեան 30,000 լ.ու., տիկին Արփիմե Խաչատուրեան 20S. տեք եւ տիկին Յովիկ Գասարեան 20,000 լ.ու.:

● Յովհաննէս Զեքեղեանի մահուան առիթով՝ Տէրտէրեան ընտանիք 15,000 լ.ու., Փառուի Եռուսէֆ Հաննա 10,000 լ.ու., Ժողէֆ Սաստ 10,000 լ.ու., Ժորճ Եագուոյ եւ ընտանիք 15,000 լ.ու., տիկին Մարի Կարապետեան եւ ընտանիք 20,000 լ.ու., Նազարէթ Զիլիֆեան 20S. տեք եւ տիկին Հրաչ Մանուշեան 10,000 լ.ու., տեք եւ տիկին Յակոբ Բեռնիքեան 20,000 լ.ու., Ժողէֆ Բուսմանու 10,000 լ.ու., Գեորգեան ընտանիք 10,000 լ.ու.:

● Տէք եւ տիկին Սօսի Նահապետեան՝ ուխտի մը

առիթով 100S, օրդ. Բաւար Տասնապետեան 50S. տիկին Արփի Սիւնիֆեան 100S, ազգային մը 100S. Լուսաւորչի Կանթոյ Առաքելութիւն 123S, ազգային մը 50S:

● Տէք եւ տիկին Վարդան Խաննեան 1 ոչխար, տեք եւ տիկին Պօղոս Էքմէքեան 1 ոչխար, Կերկեթեան ընտանիք իրենց մօր աստիճանական առիթով՝ կէս ոչխար, տիկին Կլարիկա Ջատիկեան 1 ոչխար:

● Լուսաւորչի Կանթոյ Առաքելութիւն՝ կէսօրեան հաշ՝ համալրողը, տապալուած գետնախնձոր եւ ձիւն:

● Ազգային մը կէսօրեան հաշ՝ ձուկ եւ թարաբուր:

● Էտիկ Մանուսեան Իրանէն, կէսօրեան հաշ՝ համալրողը, տապալուած գետնախնձոր եւ ձիւն:

● Ազգային մը՝ կէսօրեան հաշ՝ (թաւ միս եւ գետնախնձոր):


● Տիկին Բարիկ՝ 65 պղտիկ տոպրակ չիփս, տեք եւ տիկին Էտմոն Մոմեան 1 թիթեղ ձիւն:

թապալուած ձիւն, տեք եւ տիկին Սարգիս Գարամանուկեան՝ 62 հատ անձեռոց, Գեորգ Աբրահամեան՝ մէկ պարկ լիւր, տեք եւ տիկին Գաբրիել Քիւրքեան 1 գոլի լիւրիկ շուր, Զաւէն Սիւլիսեան 10 մահակալ, 10 քմոտ, 8 պղտիկ սեղան, 6 հատ արտ եւ նստասեղանակ մը, անուշալիւս հալ շիլի, 4 տուփ փրփի ֆուր եւ 1 տուփ շորտայ, տեք եւ տիկին Էտմար Տէլիքմէնեան՝ 4 տուփ շորտայ, ԼՍ-Ելի «Արեւիկ» մանուսիւղ 170 տոպրակ պիպրոնի շորտայ, չիփս եւ պոն ժիւս, Պիլոս պանք ժիլիլ, 3 հատ համակարգիչ, տեք եւ տիկին Ժիրայր Եագուոյեան՝ 25 քիլո պանակ, Յովհաննէս Ժամկոչեան՝ 2 տոպրակ գործածուած հագուստ, ԼՍՊ Շրջանային Վարչութիւն՝ 194 հատ գծաքաշ, ազգային մը 39 հատ գազակ, 51 հատ ֆիւզո, 17 հատ գիշերազգեստ, տիկին Գարուսեան՝ 6 քիլո պանակ, Միսաք՝ 6 քիլո պանակ, 10 քիլո խնձոր, 2 Մ.Ը.Մ. Ժուլիտէլ մասնակալ, 40 հատ մանկապարտէզի փոքրիկներու իրաւիք, Տուսմանեան հաստատութիւն, երկու թիթեղ թոռուշ, ազգային մը երկու տոպրակ փոքրիկներու հագուստեղէն, Dekerco հաստատութիւն 3 տուփ համալրողը միս, օրդ. Սիւրի Սեանեան 1 պարկ շաքար եւ Անդրանիկ եւ Ազատուի Սարգիսեան՝ 1 պարկ շաքար, 6 տուփ պիպրոնի, 1 տուփ կոմ շաքար:

ՀԱԼԷՊ ՀԱԼԷՊ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ
Հովանաւորութեամբ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Նախագահութեամբ՝
ՀԱՅ ԵՐԵՐ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԵՐՈՒ
Կազմակերպութեամբ՝
ՀԱԼԷՊԱՆԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ
Երկուշաբթի, 24 Ապրիլ 2000, երեկոյեան ժամը 9:00ԻԿ Կրթասիրաց Մշակութային Միութեան «Զ. Գաբրիէլեան» սրահ:
Հաւատարմութեամբ յարգեցնք յիշատակը մեր Գահատակներուն:
85ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՅԱՆՁՆԱՐՈՒՄ

ԿՈՉ ՀԱԼԷՊԱՆԱՅՈՒԹԵԱՆ
Հայկական Յեղասպանութեան 85ամեակի ոգեկոչումը եւ դէպի Տէր Զօր ու Մարկատէ Ուխտագնացութիւնը տեղի պիտի ունենան
Բարձր Հովանաւորութեամբ՝
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
Նախագահութեամբ՝
Թեմիս բարեջան առաջնորդ
ԳԵՐԸ. Տ. ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆԻ
Ա.ՈՒՒՍԱԳԼԱՅՈՒԹԻՒՆ ՄԱՐԿԱՏԵ ԵՒ ՏԵՐ ԶՕՐ
24 Ապրիլ 2000, առաւօտեան ժամը 02:00ԻԿ:
Բ. ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ՀԱՆԴՆՈՒԹԻՒՆ
24 Ապրիլ 2000, երեկոյեան ժամը 21:00ԻԿ, Կրթասիրաց Մշակութային Միութեան «Զ. Գաբրիէլեան» սրահ:
ԱՅՍ ԱՌԻՅՈՎ ԿՈՉ ԿՈՒՂՆԵՆՔ ՀԱՄԱՅՆ ՀԱԼԷՊԱՆԱՅՈՒԹԵԱՆ ԱՉԳԱՅԻՆ ԻՏԿԱՅՈՒԹԵԱՆ ՆԱԶԱԿԱՆ ԳՆԱՅՈՒԹԵԱՆ ԶՈՅՑ ԶԵՆՆԱՐԿՆԵՐՈՒՆ:
ՅԵՂԱՄՊԱՆՈՒԹԵԱՆ 85ԱՄԵԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

«ՄԱՐԴԱՅԻՆ» ՄԱՐԴԱՄԵՔԵՆԱՆ
Ճափոց-ցի գիտնական Գ. Գ. Գ. մշակած են մարդամեքենայը, որ կարողութիւնը ունի արձանագրելու մարդու ժամանակը եւ ժամանակը զգուցելու վերարտադրելու:
Ա. Գ. Կ. կրնայ պատել, թմբակել ու Գ. Գ. Կ. կան իր անքերը (երկու կարգաչափ մեքենաներ) դարձնել դէպի որեւէ ուղղութիւն:
Գիտնականները կ'ըսեն, թէ 1 մէթր 80 սմ. հասակով մէ 80 քկ. ծանրութեամբ մարդամեքենան առաջին է, որ կարողութիւնը ունի մարմնի ամբողջ մասերը՝ գլուխէն մինչեւ ոտքերը շարժելու, մինչ անոր «ճանաչող» կրնան միայն մասնակի շարժումներ կատարել:
Անոր համար մարդամեքենան ունի 30 յօդեր, որոնք իրենց կ'ապահովեն մարմնի գնացան մասերու շարժումներու մեծ ճկունութիւն մը:



Մարդկային շարժումներ վերարտադրող մարդամեքենան:

ԱՊԱՆՈՎՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ ՀԱԻԱՆԱԿԱՆ ՈՃՐԱԳՈՐԾՆԵՐ ԿԸ ՆԿԱՏԷ

Հսկողութեան նոր գրութիւն մը կրնայ մօտ ատեն տեղեկ պահել ուստիկանութիւնը Թերագործութիւններու մասին՝ նախքան անոնց տեղի ունենալը:

Բրիտանացի հետազոտողները մշակած են միջոց մը՝ հաւանական գողեր կամ գողակներ. կառուան մէջ յայտնուող ինքնաշարժի գող մը կամ անձնատարանի մասին տարածուող անձ մը նկատելու համար:

Ըստ «Նիւ Սալթիթիսթ» թերթին, մարդիկ, որոնք նման արարքներու մասին կը մտածեն, ուրիշներէ տարբեր կը վարուին եւ անոնց քայլերը կարելի է բուսականակնօրէն նախատեսել:

Ինչպէս եւ Լիմ համալսարաններու գիտնականներու կողմէ մշակուած գրութիւնը տակաւին փորձարկումներու շրջանին մէջ կը գտնուի. սակայն անիկա արդէն ուշագործեանց առարկայ է:

Հետազոտողները կ'առաջարկեն ապահովութեան կազմած շարք մը տուեալներով «տեսնել» ռերագործներու վերաբերմունքը: Դրութիւնը պիտի կապուի պատկերասփիւռներու եւ անգամ իր իրականութեան հետ: Գրութեան հսկող պահակներու կամ ուստիկանութեան, երբ որեւէ կասկած չի բան նկատէ:

Մրագիրը կը ֆինանսուորէ Եւրոպական Յանձնաժողովը:

ՄԱՆԱՀԵՏԵՐՈՎ ԲԱՅՈՒՈՂ ՊԱՆԱՐԱՆՆԵՐ
Գերմանական «Սիւրնո» ընկերութիւնը մշակած է շատուկ ինչպէս «բանայի մը»՝ Սմարթ Լոք, որ մարդու մը մատնահետքերը կ'օգտագործէ:
Անիկա մշակուած է այնպիսի ձեւով, որ ռերագործներ հետեւ պահէ, օրինակ, երկաթուղիներու կայարաններու պահարաններէ:
Բանային փորձարկուած է Հիւսիսային Իրլանտայի կայարաններէ մէկուն մէջ: Անիկա 1970ական բուսականներէն ի վեր հրաժարած է պահարաններ գործածելէ, որովհետեւ անոնք կ'օգտագործուէին ո՛չ թէ պայտակներու, այլ ռումբերու զետեղման համար: Հիւսիսային Իրլանտայի տեղեկատվութեան օրերուն:
Դրութիւնը կ'արձանագրէ մատնահետքերու «լեռներու» եւ «ձորերու» երկտարակալ լիցքերը: Նկատի ունենալով, որ իւրաքանչիւր մատնահետք եղակի է, անոր «տեքը» միայն կրնայ պահարանը բանալ:

ԵՆԵԿՏՐՈՆԻՔ ԳՐԻՉ ՄԸ ԶԵՂԾԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ Կ'ԱՐԳԵԼԱԿԷ
Ունեցող Նէք ընկերութիւնը կ'ըսէ, թէ մշակած է ճանաչման դրութիւն մը, որ անկարելի կը դարձնէ ստորագրութեան մը կեղծումը:
Իսրայէլեան ընկերութիւնը կը յայտնէ, թէ իր ՓԵՆՅՅՅՅՅՅՅՅՅՅՅ կրնայ նկատել ստորագրութիւններու մէջ բնական փոփոխութիւններ, կամ եթէ անոնք անբնական դիրքի մը մէջ կը գրէ:
Տասնեակ մը տեղեկութիւններ կը փոխանցուին համակարգիչի մը, որ արդէ ստորագրութեան նկարագրութիւնը ունի ու կրնայ բաղդատակաճ մը ընել:

«ԱԶԳԱԿ»
ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ
«ԱԶԳԱԿ» ի հետ կապուելու համար հեռաձայնել հետեւեալ թիւերուն. - 258526, 260115 եւ 241274:

ԲԱՆՈՒՄ՝ ՊԱՂԵՍԻՆՑԻ...

Շարունակում Ա. Լյևին

Եւ Կազախ ամբողջ տարածքին՝ պահանջելու համար իսրայելեան 11 բանտերու մէջ արգելափակուած 1635 պաղեստինցիներու ազատ արձակումը:

Իսրայել ազատ արձակած է 398 պաղեստինցի եւ արաբ այլ բանտարկեալներ, ըստ խաղաղութեան առժամեայ համաձայնագրի նորագոյնին, որ կ'ընթացէր Սեպտեմբերին՝ Իսրայելի վարչապետ Էհուտ Պարաշի եւ պաղեստինեան իշխանութեան նախագահ Եսաէր Արաֆատի միջեւ:

Հակառակ համաձայնութեանը, պաղեստինցի բանտարկեալներու եւ Սարգսյանի Իրաւանց Շնչերակ-նորիներ իսրայելը կ'ամբաստանէ բանտարկեալներու հետ իրեն ռճրագործներ եւ ահաբեկիչներ վարուելու փոխանակ գանձը պատերազմական գերիներ ճակատ ունենալու:

ՌՈՒՍԻԱ ԶԵՉԷՆ

ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐՈՒՆ ԱՌՋԵՒ...

Շարունակում Յրդ Էջևն

ՊԼԱՏԵՐԱԶԻՐ ԿՐՈՒՅՑ ՏԱՐԱՆՈՒԹԻՒՆ

Միւս կողմէ, Գերմանիոյ արտաքին գաղտնի սպասարկութեանց մէկ բանբերը երէկ յայտնեց, որ Չեչենիոյ մէջ Մոսկուայի պատերազմը տակաւին վերջ չէ գտած եւ կայ այն վտանգը, թէ անիկա կրնայ Ռուսիոյ կամ Վրաստանի նման այլ շրջաններ տարածուիլ:

Լիտիա Ռուսիոյ ըստ, որ Ռուսիոյ համար տակաւին կարելի չէ այս տագնապին վերջ տալ՝ աւելցնելով, որ տագնապի տարածման իսկական վտանգ մը գոյութիւն ունի:

Ան յայտնեց նաեւ, որ շրջանը անկայուն կը մնայ, իսկ իր գործակալութիւնը թերահաւատ է ուսական այն հաստիքներուն մասին, թէ շրջանին մէջ կայունութիւն հաստատելու ընթացքին մէջ կը գտնուի:

Գործակալութեան տնօրէնը՝ Մուկուսը Հանինկ անցեալ ամիս Չեչենիա այցելած է տեղւոյն վրայ կացութեան զննատուրը կատարելու համար: Օրին Գերմանիոյ արտաքին գործոց նախարարութիւնը գանգատած էր, թէ նախապէս տեղեակ չէ պահուած այցելութեան մասին:

Գործակալութեան բարձրաստիճանի մէկ պաշտօնատարը միտել տուած է, որ Գերմանիա տակաւին չի գիտակցիր կովկասեան շրջանի ռազմավարական կարեւորութեան իր իսկ ապահովութեան համար:

Միւս կողմէ, Գերմանիոյ արտաքին գործոց նախարար Յոշիա Ֆիշլըր երէկ Փարիզի մէջ լոյս տեսած հարցազրոյցի մը մէջ շեշտած է, որ արեւմտեան երկիրներուն համար շահեկան չէ Ռուսիան Չեչենիոյ հարցով մեկուսացնել:

Ան դիտել տուած է, որ եթէ անիկա մեկուսացուի՝ «մեր ակնկալածներուն ուղղակի հակառակ արդիւնքին պիտի յանգնէր»: Մեր շահը կը պահանջէ, որ կովկասեան շրջանը կայուն ըլլայ եւ ո'չ միայն մարդկային իրաւունքները պաշտպանուին:

Ան աւելցնեց նաեւ, որ յաւանք ունի չեչենիներու հետ քաղաքական համաձայնութիւն մը պիտի ըլլայ: (ԱՌՅՈՒՄԸ)

ԻՍՐԱՅԷԼ ՊԱՇՏՈՆԱՊԵՍ ՄԱԿԻՆ...

Շարունակում Ա. Լյևին

նանի ներկայացուցիչ Սե-լին Թատուրիի եւ Սուրիոյ ներկայացուցիչ Միխայիլ Ուսիպիի հետ, եւ անոնց փոխանցեց Իսրայելի նամակին բովանդակութիւնը: ՄԱԿի բանբեր Ֆրէտ Էքհարտ, թղթակիցներու հարցումներուն պատասխանելով, յատկապէս ինչ կը վերաբերի իսրայելեան ուժերու հեռացումէն ետք Լիբանանի հարաւին մէջ ՄԱԿի դիմագրութիւնը նոր մարտահրաւերներու, ան ըստ, որ «ՄԱԿ պիտի աշխատի, որ հեռացումը կատարուի ապահով ձեւով, առանց տեղի տալու նոր տագնապի եւ բռնութեան մագլցումին»:

Ինչ կը վերաբերի Լեւիի նամակին, ան կ'ըսէ, թէ «Իսրայել ՄԱԿի կը փոխանցէ իր կառավարութեան որոշումը՝ հեռանալու Լիբանանէն Յուլիս 2000ին»: «Այս հեռացումը պիտի կատարենք Ապահովութեան խորհուրդի թիւ

425 եւ 426 որոշումներուն հիմամբ», կը ըսէ Լեւի: ՄԱԿի ընդհանուր քարտուղար Քոֆի Անան հեռաձայնային հաղորդակցութեան մէջ մտաւ նախապէս Լաիտիի եւ վարչապետ Հրուի հետ եւ անոնց փոխանցեց Իսրայելի արտաքին գործոց նախարարին յղած նամակին բովանդակութիւնը:

Միւս կողմէ, Ֆրանսա երէկ վերահաստատեց իր տրամադրութիւնը խաղաղարար ուժեր դրկելու Լիբանան, պայմանաւ, որ իսրայելեան հեռացումը կատարուի Լիբանանի եւ Սուրիոյ հետ համաձայնութեան մը շրջագծին մէջ:

ԹՈՒՐԹԻՈՅ ՀԵՏ ՏՆՏԵՍԱԿԱՆ ...

Շարունակում Ա. Լյևին

Ֆրանսացի երեսփոխանը յայտնեց նաեւ, որ Հայաստան այցելող ֆրանսացի երեսփոխանները պիտի քրննարկեն հիմնական երեք հարցեր՝ Ֆրանսա - Հայաստան տնտեսական կապերը, Հայաստանի մէջ ժողովրդավարութեան եւ մարդկային իրաւունքներու վիճակը եւ Ֆրանսոֆոն յարաբերութիւնները:

Եւրոխորհուրդին Հայաստանի անդամակցութեան հարցին անդրադառնալով, Ժան Փոյ - Պրէտ ըստ, որ անիկա քննարկուած է Ֆրանսա - Հայաստան պատգամաւորական բարեկամութեան խումբին հանդիպումին ժամանակ, եւ աւելցուց, որ «Մեծ է Ֆրանսայի ցանկութիւնը Հայաստանը տեսնելու Եւրոխորհուրդին ներս, սակայն, տակաւին ընելիքներ կան այս գծով»: Ան չբացառեց այս անդամակցութիւնը իրագործուած տեսնելու Ազրպէյճանի հետ միասին:

«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅՎԱԿԱՆ ...

Շարունակում Ա. Լյևին

որ առաջին հերթին կեդրոնացած է Արցախի եւ աղէտի գոտի վերակառուցման աշխատանքներուն վրայ: Այս շրջագիծին մէջ, կարելու իրագործում է ԼՂՀ-ի հիւսիս-հարաւ մայրուղիի շինութիւնը, եւ նկատի ունենալով, որ առանց Արցախի տնտեսական հզօրացման, անկարելի է լուծուած մը գտնել Արցախի հիմնահարցին, ուրեմն «Հայաստան» հիմնադրամիջին միջոցով, ողջ հայութիւնը իր մասնակցութիւնը կը բերէ ԼՂՀ-ի հարցի արդար լուծման»: Նախագահ Քոչարեան աւելցուց, որ հիմնադրամը տակաւին չառ լան ունի ընելիք, որոնց շարքին՝ իր վայելած մեծ վարկին ամրապնդումը:

Այս նիստին առաջին մասը յատկացուած էր առաջարկներու: Առաջարկուեցաւ փոխել դրամահաւաքի ձեւը, հրապարակել հիմնադրամի հաշուական պատկերը, որոնք իրականացման կը հսկէ «Ամիս» հաշուապահական կազմակերպութիւնը:

Քննարկուող հարցերէն մէկը կը վերաբերէր հիմնադրամին միջոցներով իրագործուած կառուցներու ապագայ շահագործումը: Առաջարկուեցաւ, որ հիմնադրամը հսկէ անոնց շահագործման: Քննարկուեցան նաեւ այլ հարցեր, որոնց վերաբերեալ տրուած որոշումները կը հրապարակուին հիմնադրամի հանրային կապերու բաժանմունքին կողմէ:

ԽԱՉԲԱՒ ԹԻՒՒ 4542

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՐԱՋԱՐԵԱՆ

	1	2	3	4	5	6	7	8	9	10
1										
2										
3										
4										
5										
6										
7										
8										
9										
10										

ՀՈՐԻԶՈՆԱԿԱՆ ՈՒՂՂԱՀԱՅՅԱՅ

- | | |
|--|---|
| 1. Ժանտարոյր, գարշահոտ: | 1. Լեզուակ, խաղողիկ-թուշ: |
| 2. Միջնաբերդ - Յիսուսի գերդաստանէն: | 2. Կողմնակի մատնանրշել: |
| 3. Նոյն գիրերը - Եգիպտական քաղաք: | 3. Դաշնակցական նախկին մամուլէն - Նորաշխարհ: |
| 4. Արական անուն - Կտոր, հատուած: | 4. Չայնակից տառեր - Երկամուտք: |
| 5. Ստացական ածական - Սպայ: | 5. Լուսաւորիչի հայր - Խոտէլ չուան: |
| 6. Մունկերը կուրծքին դէմ ծայած նստիլ: | 6. Տառի մը անունը: |
| 7. Գաղջ - Լարաւոր նուագարան: | 7. Յայտնապէս - Առարկայ: |
| 8. Մեղմ ալիք - Հայագատագրական պաշարի ուսչիրան: | 8. Ծարունակուելի - Այբուբենէն: |
| 9. Կատաղի, մոլեգին - Կրկնուած բաղաձայններ: | 9. Լեռնադաշտ, բարձրաւանդակ: |
| 10. Հայոց դպրութեան աստուածը - Սաստիկ ցեխ: | 10. Արդուգարդի բանբուր սորուհին: |

1 2 3 4 5 6 7 8 9 10

1	U	S	U	Շ	N	L	U	U	S	
2	Պ	Ա	Տ	Ե	Ա	Լ	Մ	Ա	Լ	
3	Ա	Պ	Ա	Ռ	Լ	Ի	Ի	Ո	Ո	
4	Ռ	Ա	Ք	Ք	Ա	Հ	Ա	Ր	Ո	Լ
5	Ի	Ս	Կ	Թ	Ա	Ր	Ա	Մ		
6	Չ	Տ	Ե	Ս		Ա	Վ	Մ		
7		Ա	Ղ	Ի	Կ	Ա	Մ	Ի	Ա	
8	Ա	Կ	Ա	Լ	Ա	Ս	Մ	Ա	Հ	
9	Լ		Լ	Ա	Լ	Ա	Ս	Պ	Ի	
10	Կ	Ր	Կ	Լ	Ա	Կ	Ի	Ա	Ճ	

ԹԻՒՒ 4541

ԽԱՉԲԱՒԻՆ

ԼՈՒՇՈՒՄԸ

1.050 L.L.

750 L.L.

530 L.L.

2.690 L.L.

1.550 L.L.

1.910 L.L.

2.550 L.L.

2.550 L.L.

14.580 L.L.